ԻՍՐԱՅԵԼԻ ԳԼԽԱՎՈՐ ՌԱԲԲԻԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Նոյեմբերի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով երկօրյա այցով Հայաստան ժամանեց Իսրայելի գլխավոր ռաբբի Յոնա Մեցգերի գլխավորած պատվիրակությունը, որին մաս էին կազմում նաև Իսրայելի Կնեսետում խորհրդարանական պատվիրակության ղեկավար և գլխավոր ռաբբիի օգնական Մեր Ռոզենթալը, ռաբբի Չեյմ Այզենշտադը, գործարար Ուզի Ֆիշը, ԱՊՀ-ի հետ կապերի Կնեսետի խորհրդարանական հանձնաժողովի անդամ Յուրի Շտերնը, Համաուկրաինական հրեական կոնգրեսի նախագահ և Միջազգային միջհարանվանական «Քայլ դեպի միություն» կազմակերպության ղեկավար Վադիմ Ռաբինովիչը: Հյուրերի հետ էր նաև Ռուսաստանի հայերի Միության և Համաշխարհային Հայկական Կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը:

Նույն օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ռաբբի Յոնա Մեցգերին: Ողջունելով Իսրայելի գլխավոր ռաբբիի պատմական այցը Մայր Աթոռ, որը պատմության մեջ Իսրայելի գլխավոր ռաբբիի առաջին այցն է Հայաստան, Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմությանն ու առաքելությանը, հոգևոր կյանքի ներկայիս վերակառուցմանը:

Իր հերթին, Իսրայելի գլխավոր ռաբբի Յոնա Մեցգերը, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, խոսեց երկու ժողովուրդների միջև առկա հարաբերությունների և հավատների ընդհանրությունների մասին:

Հանդիպմանը նաև նշվեց, որ պատմական տարբեր իրադարձությունները ավելի մերձեցրել, եղբայրացրել են հայ և հրեա ժողովուրդներին և նրանց մեջ զորացրել փոխադարձ սերը և հարգանքը: Անդրադարձ կատարվեց եկեղեցականների և ռաբբիների պատրաստության խնդրին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

Նոյեմբերի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Իսրայելի գլխավոր ռաբբի Յոնա Մեցգերը այցելեցին Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Հայոց Հայրապետը և Իսրայելի գլխավոր ռաբբին պատվիրակությունների ուղեկցությամբ եղան Ցեղասպանության թանգարանում, ուր ռաբբի Մեցգերը հիշատակի մոմ վառեց և գրառում կատարեց թանգարանի հուշամատյանում: Այնուհետև, Հայոց եղեռնի զոհերի հուշարձանին ծաղկեպսակ զետեղելուց հետո, երկու կրոնապետերն իրենց հարգանքը և աղոթքը մատուցեցին ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին:

«Հնարավոր չէ առանց արցունքների հիշել այն, ինչ տեղի ունեցավ հայերի հետ Թուրքիայում»,- հայտարարեց Յոնա Մեցգերը: Պատասխանելով այն հարցին, թե ինչո՞ւ Իսրա-

յելը մինչ օրս չի միացել այն պետությունների ցանկին, որոնք պաշտոնապես ընդունել են հայերի ցեղասպանությունը, գլխավոր ռաբբին հայտարարեց. «Ես՝ որպես հոգևորականության ներկայացուցիչ, ընդունում եմ ցեղասպանության փաստը, իսկ մնացյալը կախված է քաղաքական և միջազգային հարաբերություններից»:

Խոսելով «ցեղասպանություն» տերմինի մասին՝ Յոնա Մեցգերն ասաց. «Անկասկած ես օգտագործում եմ այդ տերմինը: Այն փաստաթղթերն ու լուսանկարները, որոնք մենք տեսանք թանգարանում, այդ ողբերգության խոսուն վկաներն են: Թանգարանի ցուցանմուշները նայելիս մենք չկարողացանք զսպել մեր արցունքները, և դրանք անկեղծ զգացմունքներ էին: Որևէ մեկը չի կարող այդքան խորը զգալ ողջ տեղի ունեցածը, ինչպես մենք՝ հրեաներս»:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Իսրայելի գլխավոր ռաբբին հանդիպում ունեցան ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հետ: Ռաբբի Յոնա Մեցգերի գլխավորած պատվիրակությունը այցելեց նաև ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա և Մատենադարան՝ ծանոթանալով գիտական այս կենտրոնների գործունեությանը և հայ ձեռագրային աշխարհի գանձերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ
ԻՍՐԱՅԵԼԻ ԳԼԽԱՎՈՐ ՌԱԲԲԻ ՅՈՆԱ ՄԵՅԳԵՐԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԻՍՐԱՅԵԼԻ ԳԼԽԱՎՈՐ ՌԱԲԲԻԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ